

ԿԱՐԾԻՔ

ԱԼԵՍԱ ՄԻՍԱԿԻ ԴՈՒՐԳԱՐՅԱՆԻ «ԱՌՋԱՑ ՀԱՐԹԱԿԸ ՈՐՊԵՍ ՈԽՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑ» ԹԵՄԱՅՈՎ
ԺԳ.00.01- «ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ
ԱՍՏԻԺԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ուսումնական գործընթացի դինամիկ զարգացումը ենթադրում է ուսուցիչների վերապատրաստման գործընթացի ազգային և միջազգային մակարդակներում տարեր երկրների ձեռքբերումների, առաջնորդական դիտարկում, համեմատություն՝ ծնավորելու և ամրագրելու վերջինիս տեղայնացումն ու արդյունավետ իրագործումը:

Միասնական կրթական տարածքի ստեղծման համատեքստում ստանդարտացված դասակարգումներից բացի վճռորոշ են նաև ուսուցիչների վերապատրաստման գործընթացի արդյունավետության ապահովման սեփական առաջնահերթությունների սահմանումը՝ պայմանավորված կոնկրետ երկրի գիտակրթական գործունեության առանձնահատկություններով:

Ժամանակակից հասարակությունների գլխավոր խնդիրներից մեկը դարձել է կայուն զարգացումը, իսկ կրթությունը հանուն կայուն զարգացման՝ դարձել է արդի կրթական համակարգերի բարեփոխման գլխավոր ուղենիշը:

Կրթության համակարգում այսօր ամրագրվում է մարդաբանական, հումանիստական մոտեցումը, որի հիմքում ընկած է անձնակենտրոն հարացույցը: Հենց հումանիստական մոտեցումն է ուրվագծում կրթական համակարգի զարգացման գլխավոր ռազմավարական ուղղությունները մասնավորապես ուսուցիչների վերապատրաստման գործընթացի համատեքստում:

21-րդ դարում փոխվել են հասարակության արժեքային կողմնորոշիչները, կրթության և դաստիարակության համակարգը վերահիմնատավորել է իր գերակայությունները՝ շեշտը դնելով «մարդկային գործոնի» և անձի զարգացման հիմնախնդիրների վրա: Որպես բարձրագույն արժեք է դիտարկվում ազատ, ստեղծագործ, մասնագիտական որակյալ պատրաստություն ստացած անհատը, որն ընդունակ է ապրել ու ստեղծագործել հարափոփոխ աշխարհում, լինել մրցունակ, ինտեգրվել համաշխարհային հանրություն (И.Լ.Բոմ, 2005, с.2):

Արձագանքելով արդի հասարակության զարգացման խնդիրներին՝ ուսուցիչների վերապատրաստման գործընթացը պետք է առաջ մոլի սոցիալական, գիտական, տնտեսական և

մշակութային ոլորտներն ընդգրկող հիմնախնդիրների ըմբռնումը, ինչպես նաև բարելավի դրանք լուծելու մասնագիտական կարողությունները:

Ուսուցչի, որպես ուսուցման առանցքային սուբյեկտի արդյունավետ գործունեությունը ժամանակակից սոցիոմի զարգացման կարևորագույն գործոնն է, որը պետք է ապահովի կրթական համակարգի փոխակերպումը նոր իրականության պայմաններին համապատասխան։ Այդ փոխակերպումը ենթադրում է ուսուցիչների վերապատրաստման գործընթացի այնպիսի իրագործում, ինչը կպահանջի վերջինիս պարբերական վերլուծությունն ու գնահատումը, նորացումն ու կատարելագործումը։

Ասվածի համատեքստում, անշուշտ, արժեքավոր է ներկայացված՝ «Առցանց հարթակը որպես ուսուցիչների վերապատրաստման գործընթացի արդյունավետ միջոց» թեմայով ատենախոսությունը։ Հասարակության զարգացման նորարարական փուլին անցնելու համատեքստում ուսուցիչների վերապատրաստման գործընթացի հիմնական մարտահրավերներից է հստակ մասնագիտական գործունեություն ծավալելը, դժվարությունները հաղթահարելու հմտությունների ծևավորումը։ Այդ հիմնախնդիրի լուծումը գիտակրթական որակապես նոր մակարդակ է ապահովում։

Գիտության ու կրթության ժողովրդավարացման, գլոբալզացիայի և միջազգայնացման, նոր մանկավարժական, տեղեկատվական և թվային տեխնոլոգիաների, ինչպես նաև մոլուխիմետիկական կրթական մոդելների զանգվածային ներդրման պայմաններում ի հայտ է գալիս սկզբունքքրեն նոր, միասնական կրթական միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը։ Տեղեկատվական հասարակության, նոր տեխնոլոգիաների և սոցիալական ցանցերի զարգացման պայմաններում անհանգստանալու առիթները բազմաթիվ են՝ կապված կրթական գործընթաց իրականացնող սուբյեկտների շիման ու հաղորդակցության հետ։ Այս տեսանկյունից Ալեսա Միսակի Դուրգարյանի «Առցանց հարթակը որպես ուսուցիչների վերապատրաստման գործընթացի արդյունավետ միջոց» թեմայով հետազոտությունը արդիական է, ունի կարևոր գիտագործնական նշանակություն, քանզի ուղղված է անհատի մասնագիտական արդյունավետ գործունեությանը որոշակի մշակույթ կրող հարաբերությունների միջավայրում՝ տվյալ դեպքում առցանց հարթակում։

Հետազոտողի կողմից, որպես նպատակ առաջադրվում է «ուսուցիչների առցանց վերապատրաստման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ մոդուլային ծրագրի մշակումն ու դրա իրականացման մոդելի ստեղծումը»։ Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից (85 աղբյուր) ու հավելվածներից։ Աշխատանքը շարադրված է 126 համակարգչային էջում։

Հարկ է նշել հեղինակի արհեստավարժ մոտեցումը մասնագիտական գրականության վերլուծությանը։

Ատենախոսության ներածության մեջ հեղինակը հիմնավորել է հետազոտության արդիականությունը, ներկայացրել է հետազոտության նպատակը, խնդիրները, գիտական վարկածը, գիտական նորույթը, ստացված արդյունքների տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացված դրույթները:

Ատենախոսության առաջին՝ «Ուսուցիչների վերապատրաստումների տեսամեթոդաբանական վերլուծությունը» գլխում հեղինակաը պարզաբանել է վերապատրաստումների արդյունքում ուսուցիչների ծեռքբերումներին՝ շեշտը մասնավորապես դնելով մեղիակրթության վրա:

Երկրորդ՝ «Ուսուցիչների վերապատրաստումները հայ և միջազգային առցանց հարթակներում» վերնագրով գլուխը հեղինակը նվիրել է առցանց տարբեր վերապատրաստումների առանձնահատկություններին՝ կառուցվածքին, բովանդակությանը, նպատակի, խնդիրների ու մեթոդների մասնավորեցմանը:

Հետազոտության «Ուսուցիչների առցանց վերապատրաստման գարգացման միտումները» գլխում ներկայացվել է «ուսուցիչների առցանց վերապատրաստումների մանկավարժական մոդել»՝ մշակված հեղինակի կողմից:

Եզրակացնությունները հիմնականում բխում են հետազոտության արդյունքների տվյալներից:

Գնահատելով հետազոտողի կողմից կատարված փուլային, տևական աշխատանքը՝ անհրաժեշտ ենք համարում ներկայացել որոշ դիտողություններ: Այսպես՝

1. Աշխատանքի առաջին գլխի վերնագրի՝ «Ուսուցիչների վերապատրաստումների տեսամեթոդաբանական վերլուծությունը», ձևակերպման առումով խնդիր ենք տեսնում դրսամեթոդաբանական հասկացության օգտագործման վերաբերյալ: Կարծում ենք եզրույթը հիմնավորման կարիք ունի:

2. Հետազոտության խնդիրների 5-րդ կետը ձևակերպված է հետևյալ կերպ՝ «Մշակել առցանց հարթակում ուսուցիչների վերապատրաստման մանկավարժական մոդել»: Կարծում ենք «...մանկավարժական մոդել» ձևակերպումը պետք է շեշտադրվի, որպես մոդելի բովանդակային բնութագրիչ:

3. Հետազոտության 3-րդ գլխի 3-րդ տարբերակը՝ «Առցանց հարթակում ուսուցիչների վերապատրաստման առաջարկվող հեղինակային մանկավարժական մոդելի կառուցվածքն ու բովանդակությունը» ձևակերպումը կառաջարկենք փոխարինել «Առցանց հարթակում ուսուցիչների վերապատրաստման առաջարկվող մանկավարժական հեղինակային մոդելի կառուցվածքն ու բովանդակությունը» ձևակերպմամաբ:

4. Հաշվի առնելով այն, որ ցանկացած մոդել մեկ ամբողջական համակարգ է, և բաղադրիչները միմյանց հետ բովանդակային/տրամաբանական կապի մեջ պետք է լինեն, մոդել-սխեմայում

առանձին բաղադրիչների կապը պարզաբանելու առումով կառաջարկելինք որպես առանցք ընդունել կարողունակությունների ծևավորումը (կոմպետենտահեն կրթության հիմքով):

5. Ատենախոսությունը շարադրված է գրագետ, սակայն առկա են երկարաշունչ նախադասություններով ծանրաբեռնված գաղափարներ, որոնք, երբեմն, խանգարում են ասելիքի միանշանակ ընկալմանը, կամ պարզաբանման կարիք ունեն, օրինակ՝ «ուսուցիչների առցանց վերապատրաստման ծրագիր SCS գործիքների մանկավարժականացման ուղղությամբ»:

6. Աշխատանքում առկա են որոշ տեխնիկական խմբագրական, վրիպակներ:

Վերոնշյան դիտողությունները, մեր կարծիքով, չեն նսեմացնում ատենախոսության գիտամեթոդական արժեքը և գործնական/կիրառական նշանակությունը:

Այսպիսով, Ալեսա Միսակի Դուրգարյանի «Առցանց հարթակը որպես ուսուցիչների վերապատրաստման գործընթացի արդյունավետ միջոց» թեմայով ատենախոսությունը բավարարում է մանկավարժական գիտությունների թեկնածուի աստիճանին ներկայացվող << բավարարում է մանկավարժական գիտությունների թեկնածուի աստիճանին ներկայացվող << գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջները, ուստի արժանի է հայցվող ժգ. 00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՄԱՍԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՆՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆԻ

ՎԱՐԻՉԻ Ժ/Պ՝

Լ. Խ. ՄԻԼԻՏՈՍՅԱՆ

Լ.Խ. ՄԻԼԻՏՈՍՅԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ:

Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ԴԵՏԱԿԻՇ ՀԱՄԱՐՆԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Հ. Հ. ՓԻԼԱՎՃՅԱՆ

